ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 4
18.03.2022թ. կնքված N ՏԿԵՆ-ՀՄԱԱՇՁԲ-2022/1Շ կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի

ք. Երևան « 18 » « 11 » **2022թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ա. Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կապավոր» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Աբաղյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով Կողմերի միջև 18.03.2022թ.-ին կնքված N **ՏԿԵՆ-ՀՄԱԱՇՁԲ-2022/1Շ** պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի ընդհանուր գինը նվազեցնել **13 746 298** (տասներեք միլիոն յոթ հարյուր քառասունվեց հազար երկու հարյուր իննսունութ) ՀՀ դրամի չափով (ներառյալ ԱԱՀ-ն) և Պայմանագրի 5-րդ կետի 5.1 ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝

«5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **1 218 977 624** (մեկ միլիարդ երկու հարյուր տասնութ միլիոն ինը հարյուր յոթանասունյոթ հազար վեց հարյուր քսանչորս) ՀՀ դրամ, որից **203 162 937** (երկու հարյուր երեք միլիոն մեկ հարյուր վաթսուներկու հազար ինը հարյուր երեսունյոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:»:

1.2 Հաստատել Համաձայնագրի նոր 2022թ. Վճարման ժամանակացույցը համաձայն՝ Հավելված 1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	«Կապավոր» ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,	ԼՂՀ, ք.Ստեփանակերտ Աջափնյա 2
ՀՀ կենտրոնական գանձապետարան	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՀ 900011025823	ՀՀ 163008123412
ՀՎՀՀ 02815457	ՀՎՀՀ 90003442
Գլխավոր քարտուղար	Տնօրեն
Ա. Երիցյան	Ա. Աբաղյան
_____	_____
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հաստատված է
N ՏԿԵՆ-ՀՄԱՇՁԲ-2022/1Շ գնման պայմանագրի
«18» «11» 2022 թ. կնքված
Թիվ 4 Համաձայնագրով
Հավելված 1

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ-46(Քաշունի գյուղի խաչմերուկից)-Բարձրավան ավտոճանապարհի կառուցման աշխատանքների

(ՀՀ դրամ)

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Գնման ենթակա աշխատանքների անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	45231177/3	Հ-46(Քաշունի գյուղի խաչմերուկից)-Բարձրավան ավտոճանապարհի կառուցման աշխատանքների	---	---	591 707 483	751 647 300	751 647 300	751 647 300	1 218 977 624	1 218 977 624	1 218 977 624	1 218 977 624	1 218 977 624	1 218 977 624	**1 218 977 624**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
Գլխավոր քարտուղար
Ա. Երիցյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Կապավոր» ՍՊԸ
ԼՂՀ, ք.Ստեփանակերտ Աջափնյա 2
«ՀայէկոնոմԲանկ» ԲԲԸ
ՀՀ 163008123412
ՀՎՀՀ 90003442
Տնօրեն
Ա. Աբաղյան

/ստորագրություն/
Կ.Տ